ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **14/07/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Ասատրյանը, Գրիգոր Ղարիբյանը, Արթուր Մելոյանը, Հմայակ Խաչատրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նարինե Խաչատրյան, Ռիմա Մանուկյան, Արա Մեսրոպյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղայանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածի պահանջներով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 14-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026, 2027 և 2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի

ղեկավարի հաղորդումը 2025 թվականի երկրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N 151 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.5) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
6) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին.
7) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.
8) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.
9) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.
10) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
11) Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
12) Դրամական օգնություն տրամադրելու մասին.
13) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին.
14) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի N 15 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
15) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N 148 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
16) Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ձեռք բերվող աշխատանքները և տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունները հրատապ բաց մրցույթի ընթացակարգով անցկացնելու մասին:
17) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին.
18) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 73)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026, 2027 ԵՎ 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026, 2027 և 2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն 1, 2, 3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 169-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված «5121» (Տրանսպորտային սարքավորումներ) «20000,0» թիվը փոխարինել «18000,0» թվով:
2) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված «4241» (Մասնագիտական ծառայություններ) «2200,0» թիվը փոխարինել «5200,0» թվով:
3) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված «4251» (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) «15000,0» թիվը փոխարինել «11000,0» թվով:
4) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված «4269» (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) «0,0» թիվը փոխարինել «1000,0» թվով:
5) Բաժին 5 խումբ 1 դաս 1 (Աղբահանում) հոդված «4639» (Այլ ընթացիկ դրամաշնորհներ) «0,0» թիվը փոխարինել «20 000,0» թվով:
6) Բաժին 6 խումբ 6 դաս 1 (Կեղտաջրերի հեռացում) հոդված «5134» (Նախագծահետազոտական ծախսեր) «5000,0» թիվը փոխարինել «7000,0» թվով:
7) Բաժին 11 խումբ 1 դաս 1 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված «4891» (Պահուստային միջոցներ) «153254,5» թիվը փոխարինել «133254,5» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի երկրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 151 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 151 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի 21-րդ կետի և պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը տրամադրել մրցութային կարգով վարձակալության իրավունքով 25 (քսանհինգ) տարի ժամկետով՝ առանց կառուցապատման:
2. Սահմանել մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասի համար տարեկան վարձաչափ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48.1-րդ, 74-րդ և 76 –րդ հոդվածներով՝ և հաշվի առնելով այն հանգամաքը, որ նշված հողամասը ընգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Թույլատրել՝ համայնքային սեփականություն հանդիսացող , Հայաստանի Հանարապետություն, մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր Տանձաղբյուրի փողոց, 35/3հողամաս հասցեում գտնվող, հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,04հա (ծածկագիր՝ 07-005-0030-0126) մակերեսով հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով՝ 47(քառասուն յոթ) տարի ժամկետով օգտագործման տրամադրել:
2. Կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 200 000 (երկուհարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 79)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով «ԱՐԱՏՏԱ ՀՈՏԵԼ ԸՆԴ ՌԵԶՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Արմեն Գարագաշյանի դիմումը

1.«ԱՐԱՏՏԱ ՀՈՏԵԼ ԸՆԴ ՌԵԶՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 50 / հիսուն/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Անտառային 2-րդ թաղամաս, 4/22 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,02345 հա (ծածկագիր 07-005-0026-0092) մակերեսով հողամասը , տարեկան վարձաչափը 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 80)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով Դավիթ Արզասի Կարապետյանի դիմումը

1.Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոց, 68/27 հասցեում գտնվող բնակավայրերի, բնակելի կառուցապատման 0,002 հա / ծածկագիր՝ 07-045-0063-0119/ հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 90 /իննսուն/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել Դավիթ Արզասի Կարապետյանին:
2. Սահմանել տարեկան վարձավճար 7000 /յոթհազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 81)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով Սեյրան Բաբկենի Հակոբյանի դիմումը

1.Համայնքային սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոց, 68/25 հասցեում գտնվող բնակավայրերի, բնակելի կառուցապատման 0,002 հա / ծածկագիր՝ 07-045-0063-0120/ հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 90 (իննսուն) տարի ժամկետով օգտագործման տրամադրել Սեյրան Բաբկենի Հակոբյանին:
2. Սահմանել տարեկան վարձավճար 7000 (յոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 82)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Մարմարիկ գյուղի վարչական տարածքում գտնվող, 0,16 հա /ծածկագիր 07-044-0026-0014 / մակերեսով գյուղատնտեսական, վարելահող հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 83)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Ծաղկաձոր քաղաք Խ. Կեչատեցու 17/2 հասեում գտնվող, 0,00073 հա (ծածկագիր 07-005-0008-0196) մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 84)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. «Դու մենակ չես» մարդասիրական հասարակական կազմակերպությանը տրամադրել դրամական աջակցություն՝ 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ բուժման կարիք ունեցող երեխաներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:
2. Հայ Օգնության Միության Հրազդանի «Շուշան Պահլավունի» մասնաճյուղին տրամադրել դրամական աջակցություն՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ սահմանամերձ համայնք բարեգործական այց կատարելու և երեխաներին աջակցություն տրամադրելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 85)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի հողային հաշվեկշռին , առ 2025 թվականի հուլիսի 01-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 86)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11 -Ի N 15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2025 թականի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը սահմանելու և անհրաժեշտ ֆինանսական միջոցները հաստատելու մասին» N 15 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 87)*

ՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 -Ի N 148 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» » N 148 որոշման հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն և լրացում կատարելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 88)*

ԼՍԵՑԻՆ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և «Գնումների մասին » օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով

1. Տալ համաձայնություն՝ Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ձեռք բերվող Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Եղիշե Չարենցի, Ավետիք Իսահակյան, Նոր թաղանաս, Սարալանջ փողոցների և Ավետիք Իսահակյան փակուղու կոյուղու կառուցման աշխատանքները և դրանց տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունները անցկացնել հրատապ բաց մրցույթի ընթացակարգով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 89)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Նորոշման 1-ին կետի, 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Արմինե Աշոտի Դավթյանի դիմումը

1.Արմինե Աշոտի Դավթյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի 1-ին փողոց 8 հողամաս հասցեում գտնվող 0,022 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0001-0025, վկայական N 05052025-07-0128) մակերեսով հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի 1-ին փողոց 4/5 հասցեում գտնվող 0,018 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0001-0051, վկայական N 29042025-07-0246) մակերեսովհամայնքային սեփականություն հանդիսացող ՝ հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով 1 892484 ՝ (մեկ միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար չորս հարյուր ութսուն չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ է մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 90)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի, 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով լիազոր ներկայացուցիչ Վազգեն Սարգսի Նիկողոսյանի դիմումը

1. Էդգար Վազգենի Նիկողոսյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Նոր թաղամաս 3-րդ փողոց 25 հողամաս հասցեում գտնվող 0,055 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0016-0050, վկայական N 10062022-07-0077) մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Նոր թաղամաս 3-րդ փողոց 25/2 հողամաս հասցեում գտնվող 0,00578 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0016-0227), մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող՝ բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով 607 698 ՝ (վեց հարյուր

յոթ հազար վեց հարյուր իննսուն ութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 91)*

Ավագանու անդամներ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյան